


ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ

ՄԻՍՐԱՆԻՅ ԴՊՐԵՎԱՆՈՒՅ ԱՐՄԱՇՈՒ



Թ Ի Ի 11

1896

ՄԱՍԻՍ ԿՐՕՆԱԿԱՆ ԴՊՐԵՎԱՆՈՒՅ

Հարկեր	40	ԴՈՒՐՈՒՂ
Վեցյան	20	»
Թղթատար	10	»

Հատուկ ՄԻՅ ԴՈՒՐՈՒՂ

Կ. ՊՈԼԻՍ

Տպագր. ԱՐՄԻՆԵԼԻՔ Լրագրոյ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԲԵՄԸ	ԲԱԲԳԷՆ Վ.
ԱՆԿԱՄՈՒՈՅԾԸ	ՄՈՒՇԵՂ Վ.
ԵՓԵՍՈՍԻ Ս. ԺՈՂՈՎԸ	Ե. Վ. ԴՈՒՐԵԱՆ
ՏՍԹԵՒՈՒ ՎԱՆՔԸ	ԽՈՍՐՈՎ Վ.
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԴԱՎԱՅԱՆ ԼՈՒՐԵՐ	

Բաժանորդագրութեանց, ծանուցմանց եւ այլ մանրա-
մասնութեանց համար դիմել առ

Տնօրէնութիւն ԱՐԵՔԵԼ Լրագրոյ

Ղալաթիա, Նորասուրենկեան — Խան

Նիկոմիդիոյ գործակալն է Մինաս Էֆէնտի Աշեան,
որ միանգամայն Դպրեմանուց գործակալն է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՔ

Թէ՛ մայրաքաղաքիս եւ Թէ՛ գաւառաց համար բաժա-
նորդագինք կանխիկ կը վճարուին:

Բաժանորդագրութիւնք կ'սկսին իւրաքանչիւր ամսոյ
1 ին՝ կամ 15 ին:

ՄԱՍԻՍ

ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԽՆ. ՏԱՐԻ

10 ՕԳՈՍՏՈՍ 1896

11 ԹԻՒ

ՄԵՐ ԲԵՄԸ

Քրիստոնեայ եկեղեցիներու Բեմը Ս. Գիւրքով ապ-
րած է, և մեր եկեղեցւոյ մէջ ա՛յնչափ ճիշդ ըմբռնուած
էր բեմի նշանակութիւնը ս՛րչափ Ս. Գրոց կարդացմուն-
քին տրուած տեղը. ուրիշ խօսքով՝ մեր եկեղեցւոյ մէջ
Ս. Գիւրք կարդալ կ'նշանակէր քարոզել:

Այս իրողութիւնը լիովին ըմբռնելու համար պէտք
է մոռնալ մեր Բեմի արդի ընկած ձեւն ու վիճակը:

Դիտեցէ՛ք որ մեր նախկին եկեղեցին շատ պարզ էր:
այսինքն՝ տօներու, հետեւաբար արարողութիւններու,
արդի ճոխ կուտակումները չունէր. ասոնց տեղ կ'ափրէր
Ս. Գիւրքը իւր ընթերցումներով, իւր սաղմոսներով
(հոգեւոր երգ) կամ շատ շատ սաղմոսներու կամ օրհ-
նութիւններու հետեւողութեամբ շնորհած երգերով: Իսկ
Ս. Գիւրք իւր այդչափ երկար ընթերցումներով կաշ-

կանգուած չէր հիմակուան ժանօթ աւուր պատշա-
ճի բաժանումներուն մէջ, այսինքն՝ ո՛չ ճաշոց կար (*),
ո՛չ ալ հիմակուան ձեւով կ'կարդացուէին տառեր: —
Դաւթի հարիւր յիսուն սաղմոսները շատ կանուխ ժա-
մանակէն բաժնուած էին Ութը Կանոններու: Նախ-
նիք օրուան մէջ բովանդակ սաղմոսները կ'պաշտէին այդ
բաժանումներով և իւրաքանչիւր Կանոնի աւարտումին
դիւրք կ'կարդացուէր և կ'մեկնուէր (**):

Կարդալ և մեկնել, ահա՛ մեր բեմի նախ-
նական ձեւը (անշուշտ ուրիշ եկեղեցիներուն ալ):

Շատ պարզ և դիւրին արուեստ մը չէ՛ր սակայն
կարդալ և մեկնել. մանաւանդ ա՛յն ժամանակ, յորում
դեռ ասորի կամ յոյն լեզուներով կ'կարդացուէր
Ս. Գիրքը:

Ընթերցողն (գրակարդաց) ու մեկնիչը

(*) Եպիսկոպոսն էր որ կ'նշանակէր օրուան ընթերցումը պատշաճ
կտորները, որք չա՛տ յետոյ հաստատուն ձեւի վերածուեցան. ա՛յս է
«ճաշոցի» ծագումը: — Այս սովորութեան մնացորդն է այժմ «ժամօրհ-
նոյի» Աւետարան (հանգստեան, բժշկութեան, հսկումի առին) բանա-
լը, ո՛րքանի ալ աւետարաններ ցանկուած ըլլան նախապէս:

(**) Տ'ես Կան. երկ- նիկիական ՂԱ. եւ ՂԲ. — Կան. Լաւող. ԺԷ: —
Ասոր հետքը մնացած է մեր գործածած սաղմոսներու մէջ. իւրաքան-
չիւր կանոնի ետեւ Ս. Գիրքէն կտորներ կան «Որհնութիւն» կամ Ա-
ղօթք» խորագիրներով: Ասոնք հազիւ մնացորդներ են, բայց Ս. Գրքի
ընդարձակ կարդացումները կ'յիշեցնեն, ինչպէս «Կանոնագլուխ» սաղ-
մոսներ՝ իբր մնացորդներ՝ կ'յիշեցնեն նախնեաց ամբողջ սաղմոսներու-
թիւնը:

Սաղմոսներէն յետոյ Ս. Գիրք կարդալու եւ մեկնելու կանոնը շա-
տոնց սկսած է խափանուիլ, որովհետեւ Խոսրով Անձեւացի (Ժ. դար)
կ'զանգառի թէ ո՛չ միայն Կանոններ իրարու կցուած են, այլ մա՛նա-
ւանդ այդ միացած կանոններէն յետոյ՝ ա՛լ ծանօթութեամբ մաս մը գիրք
կ'կարդան կամ բնաւ չեն կարդար. «Առաջինքն կարգեալ են կանոնօք՝
գկանոնսն ի միմեանս ոչ յարել, այլ յամենայն Կանոնի վճար գիրք:
ընթեռնուլ ի լուսաւորութիւն մտաց եւ ի յորդորումն գործոց բարեաց:
«Մեր զամենայն սաղմոսս ի մի յարեմք», եւ ի կատարածին՝ փորք ինչ
ընթեռնումք եւ զայն ծանօթութեամբ, եւ կամ թէ բնաւ իսկ չընթեռ-
նումք» (Մեկն. Ժամեղգ. էջ 64):

միշտ կարող մարդիկ էին, վարժ իրենց արուեստին։ Անտիական և տգէտ ձեռքերու յանձնուած չէր ընթերցումը։ Վերծանող անուան ներքեւ պատկառելի խումբ մը կար. ասոնք կ'կարդային ու կ'մեկնէին։ Ինքն Ս. Մեսրոպ ընթերցող և թարգմանիչ էր միանգամայն (Խաչ. Գ. ԽԷ)։ Մամբրէ՝ կ'ներկայացնէ վերծանողներու (*) ամբողջ խումբը։ — Վերծանողներ Ս. Գիրքը նախ կ'հայացնեն և յետոյ կ'մեկնեն և իրենց մեկնութիւնը հասարակ խօսուածներ չեն։ Վերծանողը կ'առնէ ամբողջ ընթերցուածը իբր բնական, փոքրիկ յառաջաբան մը՝ իբր մուտք, յետոյ մաս մաս յառաջ կ'բերէ իւր բնաբանը ու կ'մեկնէ. անցքերն աւ կապակցութիւնները դիտուած են պատմական կարգով. կարեւոր կէտերուն վրայ կ'ծանրանայ. առիթ չփախցնեն ունկնդիրները ցընցելու կամ հետաքրքրելու անոնց վիճակին պատշաճեցնելով իր բնաբանին կամ ընթերցուածին անցքերն ու անձերը, գիտումն ու դիտողութիւնները, և յետոյ կ'փակէ յորդորանքով մը։ Այս ձեւ գրուածներն են նախնեաց ճառքները, որք յունաց քով հօմիլիա (homélie) կ'անուանուին։ Ոսկերեքանի գրուածները, որ խօսուած ալ են, ճառեր են և Մամբրէ Վերծանողի անունով հասած ճառերն նոյն ձեւով խօսուած և գրուած են։

Ինչպէս կ'երեւի, վերծանելու արուեստը՝ ուսուցումի յատուկ ձեւն է՝ որ կ'կազմէ մեր նախկին հիմը։ Մեր բեմը այս ձեւով միշտ խօսուն է Ս. Գրաց Հայերէն թարգմանութենէն յառաջ. և յետոյ աւելի ճոխ, աւելի յա-

(*) Ասորական եկեղեցին միեւնոյն պաշտօնեայնէր կ'անուանէր «խուշի» (ընթերցող) որոնց ամենէն հռչակաւորն է եփրեմ «Թուրին»։ Յ. Բահանայ Հիւնքեարպէյէնտեանի ստուգարանութեամբ «Թորենացին» ալ «Թուրի» հետ կրնայ համեմատուիլ. մանաւանդ որ «Թորենացի» լծակից կ'նկատուի Մամբրէին. և «Թորենացին» չկրնար հայերէն լեզուի օրէնքով «Թորոն» կամ «Թորոնք» ձեւէն ածանցիլ։

Նոյ ընդարձակութիւն մ'ունեցաւ վերծանութեան ուղ-
ղակի հայերէն մշակումով, որ առեն Ս. Գիրքի հայերէն
օրինակներ բաղմացան եկեղեցիներու մէջ. և մեր վար-
դապետներ աղբերացոյցին աւետարանական լուսաւոր
վարդապետութիւնը՝ վտակներու պէս մշտաբուդիս և
վճիտ։ «Եւ տարեալ ի գլուխ Սուրբ Հայրապետին Հա-
յոց Սահակայ զգործ մեծ հոգեւոր վառտակոցն (Սուրբ
Գրոց թարգմանութեան) կարգեցան յայնմհետէ վաղվա-
ղակի դպրոցք հօտին ուսմանց, բաղմացան դասք գրչոց
եղեւելս առնելով զմիմեամբք . . . պայծառացան եկեղե-
ցիք, շուր առին վկայարանք սրբոց, միշտ ծաղկելով ի
նոսա ուխտ կտակարանաց ընծայիւք. հանապազաբուդիս
հօռէին վտակք յասողացն մեկնութեանց, որք զծածուկս
մարգարէից բերելով ի յայանութիւն՝ սեղանս ամենալիցո
հոգեւոր խորակօք դնէին առաջի ամենայն Ժողովրդեան»
(Փշգ. էջ 47—48)։

Կարելի չէ՝, սակայն, պնդել բացարձակապէս թէ
բեմը միմիայն վերծանելու յատկացում ըլլայ. ընդհա-
կառակը պէտք է ընդունիլ որ բեմէն յորդորներ ալ կը
տրուէին, վարդապետութիւններ ալ կ'բացատրուէին։ Բայց
քանի որ այս ամենը Ս. Գրոց վրայ հիմնուած էին, հա-
ղիւ կրնային տարբերիլ վերծանելու արուեստէն։ Եւ ի-
րաւի, երբ ուշադրութեան առնենք այն վարդապետա-
կան ընտիր գլուածը, որ կ'գտնուի Ագաթանգեղոսի մէջ
Սրբոյն Գրիգորի անունով, յետոյ Յաճախապատումը,
Մամբրէի և Մանդակունիի ճառերը, Եղիշէի վերադը-
ռած Յետուայ և դառաւորաց մեկնութիւնն և միւս գըր-
ռածները, և դեռ ուրիշներն ալ, կ'տեսնենք թէ ամե-
նուն մէջ ալ տիրող ընդհանուր արուեստն է վերծանու-
թիւնը։

Վերծանութիւնը բնական հետեւանքն էր բրիստո-
նէութեան նորոգ ծաւալումին։ Նորահաւատներու առ-
ջեւ բնաբան մ'ընդլայնել քարոզելու արդի ձեւով, ան-
մարտելի բան մը պիտ'ըլլար։ Ամենէն առաջ պէտք էր

այդ բնաբանի բունը, աղբիւրը ծանօթացնել նորահա-
ւատին: Հաւատացեալներ ընդունած էին գիրք մը՝ Ս. Գիր-
քը. զայն բացատրել, մեկնել, ճանչցնել. միակ ապա-
հով միջոցն էր այդ գրքին թափանցել տալու ժողովր-
դական միտքը: Այսպէս ինքնին յառաջ կուգար ուսու-
ցանելու ընտանի եղանակի մը գաղափարը. նախ կաթը
և յետոյ հաստատուն կերակուրը (Ա. Կ. Բ. Գ. 2): Եւ
այս եղանակով ձեռք բերուած արդիւնքը գերազանցա-
պէս բեղմնաւոր է: Հաւատացեալը միշտ հետաքրքիր է
նոր բան մ'ունենալու, իւրացնելու և անդրադառնալու ա-
նոր վրայ: Այս է պատճառն որ հին հաւատացեալնե-
րուն աւելի ծանօթ էին Ս. Գիրքը և Աւետարանական
պատմութիւններ, և բեմի մարդիկ աւելի քաջ գի-
տէին — ժամանակին դիտութեամբը — Ս. Գիրքը:

Ինչ որ գրուիչ է մեր բեմի այս շրջանին մէջ և ինչ
որ կուղենք մատնանիչ ընել ատով՝ ուսուցումի
սկզբունքն է, զոր պէտք չէր երեսի վրայ թողուլ:
Նախնիք իրենց ըմբռնումով, իրենց դիտութեամբ կ'ու-
սուցանէին Ս. Գիրքը. մենք աւելի բան մը պարտ էինք
ընել. այսինքն՝ արդի ըմբռնումով, արդի դիտութեամբ,
մա'նաւանդ արդի դիւրութիւններով ուսուցանել ժողո-
վուրդը:

Նախնեաց ուսուցանելու սկզբունքը միշտ բարձր է
և միշտ բարձր պիտի մնայ. անոր խափանումը պէտք է
վերագրել տգիտութեան: Ստուգիւ չենք կրնար մտա-
ծել թէ Մեսրոպի և Մամբրէի գործը յաւերժացնելու և
փայլեցնելու համար անպատճառ պէտք է Մեսրոպներ և
Մամբրէներ ըլլալ. բայց կ'մտածենք որ այդ գործը շա-
րունակելու համար բնական է ուսուցումի պէտքը չմոռ-
նալ, կամ նախնեաց լաւագոյն գործերուն վրայ վարա-
գոյր չքաշել:

Շատոնց ի վեր ո՛չ միայն արարողութիւններով ըն-
դոտնուած է ուսուցումի գործը, այլ մա'նաւանդ արա-
րողութիւնները դեռ չափազանց կ'երկնցնենք, քարոզին

Ժամանակը կարճեցնելու համար : Շատոնց ի վեր ո՛չ միայն Ս. Դրոց ընթերցումները սեղմած ենք , այլ մանաւանդ զայն ալ թողած ենք ա՛յնպիսի ընթերցողներու , որք առ հասարակ տող մը չեն կրնար հասկնալ ընթերցածներէն , և ընթերցումի սխալներ կ'ընեն :

Ի՛նչ անկում . — Դէթ ասոնց փոխարէն՝ մեր եկեղեցին բեմական ընդհանուր գործունէութիւն մ'ունենար , կարելի պիտ'ըլլար թերեւս վերծանողներու գործն ալ կատարուած համարել մասնակի յաջողութեամբ մը :

— Բայց զեռ մենք Բեմ չունինք :

ԲԱՐՅՈՒՆ Վ.

Ա Ն Դ Ա Մ Ա Լ Ո Յ Ծ Ը

Կ Ի Ր Ո . Կ Է Ի Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն (Մ Ի Կ . Բ . 1 — 12)

Եթէ մէկգի առնուէք Աւետարանի գեղեցիկ էջերէն աստուածաբանական վարդապետութիւններու ինչ ինչ հատուածներն ու բարոյականի արտայայտուած ոկղբունքներն , այն ատեն ձեռքերնիս պիտի ունենանք պատմութիւն մը հրաշքներու , որոնց մէջ ի հանդէս կուգան կաղը , կոյրը , անդամալուծը , զիւահարը , լուսնոսը , իրենց ախտաւոր կեանքի տխուր կողմերով : Մարդկային թշուառութիւններու և հառաչանքներու պատմութիւնն է Աւետարանը , որուն մէջ ամէն վէրք դարման մ'ունի , ամէն կսկիծ՝ ախտիանք մը ու ամէն թշուառութիւն՝ մխիթարութիւն մը . հոն մութի ու միայնութեան մէջ արձակուած խեղդուկ աղաղակն անգամ կրճական խանդով մը ոգեւորուած է . հոն ամէն մէկ գիծ աստուածային գթութեան մէկ հետքը կ'կրէ , որքան ալ տխուր եղած ըլլայ անոր պատմութիւնը : Ասիկա ստոյգ կերպով ցոյց կուտայ մեզի պատճառը , թէ ինչո՞ւ նախապէս քրիստոնէական եկեղե-

ցին ընկերութեան ստորին դասակարգէն կաղմուեցաւ : Կրօնը՝ քրիստոնէական կրօնը մանաւանդ , ապաստանարանն է այն հոգիներուն , որոնք աշխարհէն հարուածուած , խղիւղութիւն վէրքի մը խոցաուքներն սնին իրենց մէջ : Եւ Քրիստոսի կեանքի ամբողջ նպատակը ուրիշ բան չէր , բայց եթէ ջնջել մեղքի տիրապետութիւնը և անոր արդիւնք եղող հիւանդութիւնները բուժել . բարձրացնել մարդը գիտակից հաւատքի համոզումներով և սատորաստել զանի անվախճան կեանքի մը տնտրականով :

Վաղուան ճաշու Աւետարանին նիւթն ամբողջ նկարագրութիւնն է հրաշալի բժշկութիւններէ միայն , որուն մէջ ցուցած է Քրիստոս իր աստուածային մեծութիւնն , և իր գերմարդկային կարողութեան ապացոյցներէն մին տուած է հոն : Իր շքուորէն քարոզութեան մէջ իրեն սովորական առանձնակի աղօթքն ընելէ վերջ՝ Կախառնաւ կուգայ Քրիստոս : Ժողովուրդը՝ կ'ըլիմէ , զէպ ի այն տունն , ուր սովորաբար կ'հանգչէր Յիսուս ու կ'քարոզէր : Իր քանի մ'օրուան բացակայութենէն աւելի եւս դրդուած էր ժողովուրդին հետաքրքրութիւնը՝ նոր նոր սքանչելիք տեսնելու յուսով : Խանութիւն ալ դրան առջև՝ խաղառ խախտած էր տանը մուտքը , երբ « Բերէին անդամալոյ՝ մի բարձեալ ի չորից » : Բայց հիւանդին տէրերն տեսնելով որ անհնար է ուղիղ ճամբով մօտենալ Յիսուսի և իրենց անդամալոյձին բժշկութիւնը հայցել ,

« Վակեցին գլարկն ուր էր Յիսուս , եւ քացեալ զառաստաղն՝ իջուցին զմահիւսն յորում կայր անդամալոյձն » :

Անդամալոյձի բժշկութեան մանրամասնութիւնք կ'սկսին Մատթէոսի Աւետարանին մէջ (Մ. Թ. 1—8) . իսկ Ղուկաս քիչ մ'աւելի մանրամասն կ'սկսումէ , ըսելով . « Եւ իրեւ ո'չ դտանէին թէ ընդ որ մուծանիցեն զնա ի ներքս վասն ամբոխին , ելին ի տանիս և ի ցուոցն կախեցին զնա , և իջուցին մահճօքն հանդերձ ի մէջ , առաջի Յիսուսի » (Ե . 19) : Անդամալոյձի բժշկութեան այս պատմութեան մէջ նկատելիք երկու կէտեր կան : Մատթէոս այս պատմութեան եղելութիւնը կը դնէ Գերզեսայի դիւահարներուն բժշկութենէն անմիջապէս վերջ և Մատթէոսի առաքելական կոչումէն առաջ , մինչ մեր բնագիրն ու Ղուկաս զայն կ'ընեն բոլորովն բժշկութենէն ետքը : Նկատելիք երկրորդ պարագայն այն է , թէ ինչպէս կրցան անդամալոյձը

տանիքին վրայ հանել և անկէ վար իջեցնել Յիսուսի առջեւ : Մեկ-
նիչներն երկու ենթադրութիւններու վրայ հիմնուած են , կա՛մ
այն է որ տանը պատին կից դրուած տանդուխտ մը կրցան վեր
եղնել և կամ , թէ կից տունի տանիքէն անցան Գրիստոսի բնա-
կած տունին տանիքը , որովհետեւ Պաղեստինի տուները իրա-
րու կից շինուած էին հարթ-տանիքներով : Գալով առաստաղը
ծակելու գործողութեան , անոր դժուարութիւններն հարթելու
համար , ոմանք ենթադրեցին թէ անդամալոյծը տանը մէջ իջու-
ցին տանիքին վրայ բացուած ա՛յն ծակէն , որ յատկացուած էր
անձրեւի ջուրերն հաւաքելու համար կամ լուսանցոյց պատուհա-
նէն : Սակայն առանց այդ ենթադրութեան ալ գոյութիւն չունին
երեւակայուած դժուարութիւններն : Պաղեստինի հարթ-տանիք-
ներն շինուած էին ճիւղերու կամ եղէգի խորձերով , որոնց վրայ
կարգ մը հող և երբեմն ալ կարգ մը աղիւս միայն կար : Բա-
ւական էր այդ հողն մէկգի ընել զգուշութեամբ , և ահա ծակ
մը բացուած պիտի ըլլար տրամադրելի , ուրկէ կարելի էր հա-
ղորդակցութեան մասնէլ ներսին հետ : — Այդ բացուած ծա-
կէն անդամալոյծը կ'առնէին կ'ներկայացնէին Յիսուսի , որ տեո-
նելով իրեն ներկայացողներուն իրարանցումն , արդիւնք ան-
կեղծ հաւատքի , անդամալոյծին կըսէ . « Որդեալ թողեալ լի-
ցին քեզ մեղք քո » :

Յիսուս տեսնելով այդ անդամալոյծին հաւատքը , ա՛յնքան
խանդավառ ու համոզումներով լեցուած , տեսնելով նաեւ ա-
նոր սրտածակիկ վիճակը , մարմնական խեղութիւնը , փոխա-
նակ անմիջապէս պարզեւելու բաղձացուած բժշկութիւնը , իր
առաջին խօսքը կըլլայ ,

« Թողեալ լիցին քեզ մեղք քո » :

որովհետեւ հրէական ընդհանուր դատաւարն այն էր , թէ հի-
ւանդութիւնն ընդհանրապէս պատիժն էր մարդուս ունեցած
այս կամ այն մեղքին : Թէ ո՛րչափ արմատացած էր այս դա-
տաւարը նոյն իսկ առաքեալներուն մէջ , յայտնի կ'աւանուի
ի ծնէ կուրին հանդէս անոնց սա հարցումէն , « Ռաբբի , ասոր
կոյր ծնելուն մեղքը որո՞ւնն է , իրե՞նն է թէ իր ծնողացը »
(Յա՛վհ . Թ 2) : Ուրեմն պէտք էր նախ հիւանդութեան պատ-
ճառը ջնջել , թողլով անոր մեղքերը :

« Թողեալ լիցին քեզ մեղք քո » . — Յիսուսի այս հրամանը

որ իբրեւ աստուածային պատգամ՝ կ'ընդունուէր հաւատալու տրամադրուած ժողովուրդի կողմէն, տարբեր արգիւնք յառաջ բերաւ Փարիսեցիներուն և օրինաց վարդապետներուն վրայ, որոնք ժողովուրդին մէջ կ'դռնուէին, եկած ըլլալով «յամենայն քաղաքաց Գալիլիացաց և Հրէաստանի և Երուսաղէմի» (Ղաւ. Ե. 17): Յայտնի կ'երեւի թէ Երուսաղէմէն յատկապէս զրկուած էին Փարիսեցիներ՝ իբրեւ ներկայացուցիչ աստուածաբանական-քաղաքական մարմնոյն, և օրինաց վարդապետներ, իբր դատաստանական ժողովոյ անդամներ: Ասոնց պաշտօնն էր մօտէն հսկել Յիսուսի վրայ, ի հարկին վիճաբանիլ և արգիլել խօսելէ այն Մարդը՝ որ հինը կ'տապալէր և իրենց աւանդութիւնը կ'կործանէր: Ասոնց ըմբռնումով Յիսուս ազանդաւոր մ'էր, Մովսէսի ու Մովսիսականութեան հակառակորդ, բաց աստի Յիսուս մարդ մ'էր, և Աստուծոյ զատ ո'չ իշխանութիւն ունէր «թողուլ զմեզս». — Որպիսի՞ հայհոյութիւն: Օրինականներուն ուղածն ալ այդ էր. դռնել անոր բերնին մէջ հայհոյութեան բառ մը, զանի ամբաստանելու համար ժողովուրդին առջեւ: Փարիսեցիներուն կատաղութիւնն անչա'ի էր. իրենց լուծութեան մէջ անդամ — «զի՞ խորհիք ի սիրտս ձեր» — բարկութիւնը ակներեւ նկատուած էր դէմքերնուն վրայ: Եւ Յիսուս, որ մարդուս հոգւոյն խորերը թափանցելու և երկամունքի դադանիքներն՝ իբրեւ բաց գրքի մը մէջ՝ կարդալու կարողութիւնն ունէր, նորէն բացաւ իր բերանը: Այս անգամ իր սիրոյ ու կարեկցութեան խօսքերն կ'առաջանային սասան ունին հանդէպ օրինակաւորներուն, որոնք հայհոյանքի մը դադախարէն դայթակղած էին.

«Զի՞նչ դիւրին է, ասել՝ Թողեա՛լ լիցին քեզ մեզք քո, եթէ ասել, Արի և դնա». Այս խօսքով Գրիստոս ըսել չուզեր, թէ բժշկելն աւելի դիւրին է քան թէ մեղքերը թողուլը, այլ թէ, մարդ կրնայ սուտ բժշկութիւններ կատարելով խաբւրայի մը զիմակն առնուլ փոխանակ մեղքերը թողելու, որովհետեւ այս վերջինը զգալի նշաններով չ'արտայայտուիր, այլ ներքին անդորրութեան և համոզումի դործ է միայն, ուրկէ չեն կրնար ուրիշներ օգտուիլ: Այլ մանաւանդ ըսել կուզէր անոնց, թէ ինքն «Մարդուն որդին», իբրեւ Աստուած, «իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերը թողուլ»:

«Որդի մարդոյ» յորջորջումը, զոր Քրիստոս ստէպ կ'գործածէր իրեն համար, ո՛չ միայն աղամային ծագում մը տալով իրեն կ'նշանակէ մարդու որդիներուն մէջ ճշմարտաբայ և ամենէն մեծը: Այս խնայտին հետ պէտք է կցել նաեւ մարդարէական գուշակութիւն մը. որովհետեւ Դանիէլի տեսիլներէ միոյն մէջ կ'կարգանք. «Տեսանէի ի տեսլեան գիշերոյ՝ և ահա ընդ ամպս երկնից իբրեւ Որդի Մարդոյ գայր. . . և մատուցաւ առաջի նորա» (Դան. է. 13): Այս հատուածէն կը տեսնենք որ Դանիէլի տեսիլքին ապագայ գործողը պիտի գայ երկնքի ամպերուն վրայ, իր մէջ ունենալով «Իշխանութիւն և պատիւ և արքայութիւն» յաւիտեական: Այս մարդարէական գուշակութիւնն ա'յնքան ազդած էր հրէական երեւակայութեան վրայ, որ Ռաբբիներն ապագայ Մեսիան կ'ընկերէին Ա. անի անունով, որ կ'նշանակէ ամպերու վրայ: Այսպէս մարդարէութեան ու իր գիտակցութեան առջև Քրիստոս առաւ «Որդի Մարդոյ» անունը, մկրտութեան ատեն Սատուծոյ վերաբերմամբ ընդունեց «Որդի Սատուծոյ կոչումը, իսկ Իսրայէլի համար «Որդի Դաւիթի» եղաւ նա: Յիսուսի համար սիրելի էր «Որդի Մարդոյ» կոչել ինքզինքը, խորշելով Մեսիա յորջորջումէն. որովհետեւ Մեսիա գաղափարը կրնար սխալ ըմբռնումներ ներշնչել ունկնդիրներուն, քանի որ անոնց Մեսիայի հաւատքը սխալ խնայումներու վրայ հիմնուած էր:

Հրեայ օրինականներուն տրուած պատասխանէն վերջ, քանի մը լուռ վայրկեաններ սահեցան: Դպիրներու սրտի դառնութիւնը դուրս կ'աղութկար, սեւ մաղծի պէս. կատաղութիւնը իր վերջին աստիճանին հասած էր: Միւս կողմանէ ժողովուրդն հետաքրքիր՝ նոր սքանչելիքի մը ակնկալութեամբ իրաց վախճանին կ'սպասէր: Եւ Քրիստոս, կատարելու համար անդամալոյծին խնդիրը և ազով՝ նոր հարուած մ'ալ տուած ըլլալու համար Փարիսեցիներու կոյր ատելութեանը, կ'դառնայ անդամալոյծին ու կըսէ անոր. «արի ա՛ռ գմահիճս քո և երթի տուն քո»: Այս հրամանին արդիւնքը վայրկեանապէս տեսնուեցաւ. անկողնին մէջ երկար տարիներէ ի վեր տառապող անդամալոյծն կանգնեցաւ իր տեղէն. զինքը կաշկանդող մահիճը ուսին վրայ առաւ, ճեղքեց անցաւ բազմութիւնը, յաղթական անցք մը գործելով ապշած Փարիսեցիներու մէջէն, ժողովուրդէն խելլով դարմանքի ճիւղեր:

ժողովուրդը, որուն վրայ մեծ տալաւորութիւն կ'դրժեն արտաքոյ կարգի դէպքերն, անդամալոյծի բժշկութեան առթիւ ալ աւելի համոզում կ'կազմէ Յիսուսի աստուածային կարողութեան վրայ: «Նոր նշան մը տեսած ըլլալու» երջանկութիւնը այս անգամ նորէն կ'դրդէ զիրենք, սոսկումով ու խնդութեամբ լեցուած՝ փառաւորելու Տէրը, որ զիրենք միայն աշխարհի բոլոր ազգերուն մէջ՝ արժանի կընէր իր փառաց յայտնութիւնները տեսնելու, և երախտագիտական զգացումներով օրհնելու զինքը:

ՄԱՌՇԵՂ, մ.

ԵՓԵՍՈՍԻ Ս. ԺՈՂՈՎՐ

Տիեզերական ժողովներու երրորդն է այն, զոր և խորեւ վերջինը ընդունած է Հայոց Եկեղեցին, 431 ին գումարուեցաւ Եփեսոսի մէջ, ուր ներկայ էին երկու հարիւր հայրեր Նեստորի մոլորութիւններն դատապարտելու համար:

Այս թուականէն ճիշդ կէս դար առաջ գումարուած Կոստանդնուպոլսի տիեզերական ժողովին մէջ (381) որ դատապարտեց Ապոլինարը՝ Եկեղեցւոյ վարդապետութեան հակառակ մէկ մասը հաստատուած էր արդէն, այն էր՝ ընդունիլ ի Քրիստոս բանական հոգի մը, ինչպէս մեր հանգանակին մէջ կ'կարդանք. «էառ մարմին, հոգի և միտ». ապա թէ ոչ՝ կատարեալ մարդ չէր կրնար ըլլալ Փրկիչը: Այսու ամենայնիւ պէտք էր դառնալ Նաեւ թէ մի էր Քրիստոս, և իր աստուածային բնութիւնը յեղում կամ փոփոխութիւն չէր կրած մարդանալովը: Քայց թէ ինչպէս միացած էին Քրիստոսի վրայ երկու

բնութիւններն (աստուածայինն ու մարդկայինը), սակաւին որոշ վարդապետութիւն մը չկար:

Ժամանակին աստուածաբանական երկու զլխաւոյ գալրոյններն (Աղեքսանդրիոյ և Անտիոքի) բոլորովին տարակարծիք էին այդ մասին: Անտիոքի գալրոյցը մարդկային հոգեւոր բնութիւնը աստուածային անհուն բնութենէն անջատ նկատելով՝ երկու ենթակայութիւններ կամ երկու անձեր միացած կ'նկատէր Յիսուս Քրիստոսի վրայ. իսկ Աղեքսանդրիոյ գալրոյցը Քրիստոսի անձին միութիւնը լուսաւոր ընելու խորհուրդով՝ միայն աստուածային մարմնացեալ բնութիւնը կ'ճանչէր ի Քրիստոս. «Մի բնութիւն Աստուծոյ Բանին մարմնացելոյ»: Ասով Քրիստոսի անձին էութիւնը՝ կ'նկատուէր իր իսկ աստուածային բնութիւնը, իսկ մարդկային բնութիւնը իրբեւ պարզ պատահում մը՝ առանց սակայն երեւութական բան մ'ըլլալու: Այս կարծիքէն էր նաեւ Յուլիոս Պապը՝ որ յայտնապէս կ'վարդապետէր՝ թէ Յովհաննէս և Պօղոս մէկ Քրիստոս և մէկ Փրկիչ քարոզած են, ուստի և հարկ չէ՝ երկու բնութիւններ դառնիլ, այլ մէկ բնութիւն միայն:

Թերեւս այս տեսութիւններն իրբեւ բառի կռիւներ երկար ատեն ժուռ գային առանց քրիստոնէական հաւատքը նոր բացատրութիւններով ծանրաբեռնելու, և ամէն հաւատացեալ ազատ զգար ինքզինքն իր Փրկչին պաշտելութեանը ամենապարզ համոզումին մէջ, սակայն և այնպէս երկու գալրոյններուն հինէն մնացած ատելութիւնը, և երկու աթոռներուն (կոստանդնուպոլսի և Աղեքսանդրիոյ) նախանձընդդէմ ոտնձգութիւններն սատիկ պայքարի մը շչուկն յարուցին: Իրաւ է որ՝ միւս կողմանէ սակայն՝ հին վիլիսոփայութենէ փոխ առնուած և վարդապետական լեզուի մէջ դարձածուած քանի մը բառերն որ նոյն սահմաններով կամ նոյն բացատրութիւններով չէին հասկցուած, տակաւ նոր յղացումներու երկունքներով ալ սպառնական երեւոյթ մը կ'առնուին:

Ձերիստոս կատարեալ աստուած և կատարեալ մարդ-
յայտարարող ուղղափառ բանաձեւէն երկու բնութ-
թիւնն երկու խնդիրը պիտի ծագէր: Անտիոքի դպրո-
ցին նշանաւոր վարդապետներէն Դիոդոր Տարսոնացի և
Թէոդորոս Մոպսուեստացի Նիկիական հաւատքին հաւա-
ւատարիմ մնալով հանդերձ՝ իրենց քրիստոսաբանութիւնը
(christologie) սա սկզբունքին վրայ հիմնած էին՝ թէ աստ-
ուածային և մարդկային բնութիւնները — մին չարչար-
ուելու անընդունակ՝ իսկ միւսը չարչարուելու ենթակայ—
կարելի չէր վերածել «բնական միութեան մը (հէնո-
սիսփիսիկի) ուստի և Քրիստոսի վրայ երկու որիչ
բնութիւններ կ'ընդունէր, որպէս թէ բանն Աստուած
հաճած ըլլար բնակիլ մարդու մը մէջ, հոգեկան յարա-
բերութեամբ կամ բարոյական կցորդութեամբ մը (synaphia)
միաւորուած ըլլալով Նազովրեցի Յիսուսին հետ: Այսու
հանդերձ Թէոդորոս սա ալ կ'վարդապետէր. «երկու
բնութիւն, մի անձն», ինչ որ յետոյ Քաղկեդոնի ժողո-
վին վերջնական բանաձեւը դարձաւ:

Այս էր Անտիոքի դպրոցին տեսութիւնը Քրիստոսի
մարդեղութեան վերաբերմամբ. իսկ Աղեքսանդրոյ դըպ-
րոցինը տարբեր էր բոլորովին: Աթանաս հայրապետը-
եւ ինքն էր արդէն. «ոչ երկու բնութիւններ՝ մին պաշտելի
և միւսն ո՛չ պաշտելի, այլ մի բնութիւն միայն
Ճարմնացեալ Բանին Աստուծոյ» (Մանսի, Դ. 689): Այս-
պէս կ'ընդունէին նաեւ Կապադովկեան հայրերն (Բար-
սեղ, Գրիգոր Նիսսացի և Գրիգոր Աստուածաբան): Եկե-
ղեցոյ նորագոյն պատմիչներէն մէկը Kraus գերմանացին
կ'գրէ՝ թէ այս վերջիններն «երկու բնութեանց խառնում»
մ'ալ վարդապետեցին, ինչ որ Օգոստինոս mixtura բա-
բառով կ'իմանար (Պատմ. Եկեղ. հտ. Ա. էջ 269 գաղ.
թարգմ.):

Բայց ահա խնդրին լուսաբանութեան կարօտ կէտը.
դարձածուած բառերը Աղեքսանդրեան դպրոցին և Ան-
տիոքի դպրոցին համար նոյնիմաստ չէին, ինչպէս կ'ը-

սէինք. Աղեքսանդրացիներն hypostasis, physis և ousia (= անձնաւորութիւն, բնութիւն, էութիւն) բառերն գրեթէ իբրեւ հոմանիշ կ'գործածէին, և այս պատճառաւ Թէոդորոսի գործածած «երկու բնութիւնք»ը պարզապէս սխալ իմացման տեղի պիտի տար՝ թէ իսկ Մոպսուեստացին ինքն իր բացատրութիւններովն արդէն իր մոլորութիւնը հաստատած չըլլար: Արեւելցիներն Բարսեղէն սկսեալ՝ կ'զանազանէին hypostasis ը ousia էն՝ իրեւ անհատը սեռէն, և ousia բառը physis բառին տեղ անխտիր կ'գործածէին. ըստ այսմ՝ այս վերջիններուն համար՝ մարդ սեռական բառը մարդկային ուսի՝ ան կամ բնութիւնը ցոյց կուտայ, մինչդեռ Պոզոսը հիւպոստասիս է կամ անհատ մը: Արդ՝ ուսի՝ բառով կ'բացատրէին ինչ որ հասարակ էր Երրորդութեան անձնաւորութեանց՝ յաւիտենականութիւն, զօրութիւն, բարութիւն ևն. և հիւպոստասիս բառով ալ՝ ինչ որ յատուկ էր անոնցմէ իւրաքանչիւրին, ինչպէս՝ Հայր, Որդի, Հօգի, իսկ Արեւմտեաններն՝ ընդհակառակն՝ հիւպոստասիս և ուսի՝ բառերը substantia (= գոյացութիւն, էութիւն) բառով կ'մարդմանէին և սովորէին մէկ հիւպոստասիս և երեք անձինք ըսել Երրորդութեան համար (Haag, Hist. des dogmes - հար. I. 473):

Գալով Կիւրղի՝ Աղեքսանդրիոյ հայրապետին որ նախագահեց Եփեսոսի ժողովին՝ իբրեւ Աղեքսանդրիոյ աւանդական աստուածաբանութեան ներկայացուցիչ՝ մեծ տարբերութիւն մը չէր դնել Փիսիս և հիւպոստասիս բառերուն մէջ, թէեւ ո՛չ երբեք երկու հիւպոստասիս ըսած է երկու փիսիս ըսելու տեղ —, իրեն բացատրութեամբը «բնութիւն» և «անձնաւորութիւն» աստուածային էութեան վրայ միայն կրնային զուգակցիլ և ո՛չ թէ մարդկային բնութեան վրայ և թէպէտ Քրիստոսի կ'ընծայէ մարդկային էակը բաղկացնող ամէն տարբերքները, բայց չունի այն համոզումը

թէ Քրիստոս ա՛ն հ ա տ ա բ ա ր մարդ եղած ըլլայ: Քրիստոս Բանն է որ իր վրայ առաւ մարդկային բնութիւնը, և ասով միայն կրնայ ըլլալ մեր Փրկիչը: Ըստ Կիւրղի՝ երէ՛ս բնութիւն կրար Մարգեղութենէ առաջ, իսկ վերջը մէկ միայն, այսինքն աստուածային-մարդկային բնութիւնը՝ որ «տեսականապէս միայն» կրնայ բաժնուիլ: Այդ միութիւնը սակայն աստուածութիւնը չարջարուելու ընդունակ վիճակի մը չենթարկեր, այլ Բանն է որ մա՛ր մն ո վ ը կ'չարջարուի. Բանն է ուրեմն «աստուած խաչնալ» (թէ ո՛ս ա տ ա ւ ր օ թ ի ս) ելն:

Նվեցողի ժողովը այս վարդապետութիւնն հռչակեց իբրեւ ուղղափառ և համաձայն նախնի հայրերուն (*), հակառակ Նեստորի՝ որ իբրեւ աշակերտ Անտիոքի դըպրոցին՝ Թէոփորոսի կարծիքներն կ'որոճար իր մօքին մէջ և երբ Կ. Պոլսի Պատրիարք եղաւ (428), ինքզինքն յայտնեց՝ Ս. Կուսին տրուած թէ ո տ ո՛ կ ո ս (Աստուածածին) կոչումին դէմ մաքառելով, զոր Աթանաս առաջին անգամ սկսած էր գործածել: Հարկ չկայ ըսելու՝ թէ ինչո՛ւ Նեստոր կ'մերժէր այդ բացատրութիւնը և անոր տեղ կուզէր դնել քրիստոսածին բառը: Նեստոր յայտնապէս երկու մասերու կ'բաժնէր զՔրիստոս, այսինքն Բանն ու մարդը, և Մարիամ մարդուն միայն ծնունդ տուած ըլլալով՝ չէր կրնար Աստուածածին կոչուիլ: Կ'պնդէր Կիւրղի թէ Պօղոս Սամոստացիին (Անտիոքի եպիսկոպոս) սխալ վարդապետութիւնն էր այն՝ զոր կ'նորոգէր Նեստոր: Կիւրղի տուած բացատրութիւններուն լիովին համամիտ գտնուեցաւ նաեւ Կեղեւտինոս Պապը. — Ըստ Կիւրղի՝ ինչպէս ըսինք՝ մի էր Քրիստոս, և միութենէ

(*) Յայտնի ճշմարտութիւն մ'է Թէ Կիւրղի վարդապետական նորութիւն մը չէր դնէր բնաւ իր դաւանանքին մէջ, եւ ինչպէս կ'ըզէ Gieseler, «Նա հին հայրերու կարծիքներուն մեծ կարեւորութիւն կուտար, եւ ամէն կերպով կ'ջանար պաշտպանել եւ ընդունել տալ զանոնք իբրեւ եկեղեցւոյ վարդապետութիւնը» (Hist. des dogmes էջ 244. գաղ. ծարգմ.):

վերջ (հէնոսիս փիսիկի) կարելի չէր բաժնել բնութիւնները. ո՛չ ալ Ս. Գիրքին այս ինչ հատուածներն անոր մարդկութեանը և այն ինչ հատուածներն անոր աստուածութեանը վերագրել. ամէն ինչ մէկ Քրիստոսի՝ մէկ Որդիի՝ Աստուծոյ պէտք էր ընծայել. հակիրճ՝ չէր ընդունելու երկու բնութիւններ միաւորումէ վերջ, վասնզի երկուսն էր ճանչել էր այն՝ Փրկչին վրայ, ինչպէս կ'ընէր Նեստոր:

* * *

Քանի մը խօսքով ալ Հայոց Եկեղեցիին դէպի Եփեսոսի Ս. Ժողովն ունեցած վերաբերութիւնն ու անսայթաք հաւատարմութիւնը ցոյց տանք. ինչպէս կ'կարդանք Խորենացոյ պատմութեան մէջ (Գ. ԿԱ)՝ «Ոչ հանդիպեցան յայնմ ժողովի Մեծն Սահակ և Մեսրոպ». բայց Պրոկղ Կ. Պոլսի Պատրիարքի և Մելիտինէի Ակակ եպիսկոպոսի (թերեւս և Կիւրղի) կողմանէ զրկուած թողութեան և ժողովին վարդապետութիւնն ու կանոնները՝ զորոնք իրենց հետ բերին մեր թարգմանիչները (Ղեւոնդ, Կորիւն, Յովհան, Արձան) առանց դիտողութեան ընդունուեցան Աշտիշատի ժողովական գումարումին մէջ: Այդ առանձին թուղթերու նպատակն էր զգացնել Հայոց Հայրապետին թէ Նեստորի համախոհներ Մոպսուեստացոյն (Նեստորի վարժապետին) գիրքերն թարգմանելով այլ և այլ լեզուներու՝ ինչպէս նաեւ հայերէնի՝ կողմէն ամէն կողմ տարածել իրենց մոլորութիւնները, ուստի պէտք էր զգուշանալ և ամէն միջոց ի գործ դնել այդ հոսանքն արգիլելու համար: Հաւանականաբար Եփեսոսի Ժողովին գումարումէն 3—4 տարի վերջ պէտք է զննել այդ թուղթերու առաքումը կամ մեր թարգմանիչներուն դարձը. վասնզի Նեստորի գիրքերուն այրումն ու պաշտօնական ջնջումը թելադրած էր անոր հետեւողներուն՝ անուղղակի օգուտ քաղել թէոգորոսի դրուածներէն: Սահակ և Մեսրոպ առանձինն պատասխանելով

այդ թուղթերուն՝ նախ իրենց պարզ գաւանդութիւնը յառաջ կ'ընեն և յետոյ՝ նետորականութեան գէժ խօսելով՝ կ'ըսեն նաև թէ՝ «որ Դիոգորեայ Մասիստրացւոյ (Թէոգորեայ Մոպսուեստացւոյ) աշակերտեալք իցեն, առ ժամանակս ի շնորհացն Աստուծոյ՝ այնպիսի ինչ չեն է յայտնեալ», և կ'ստատանան որ եթէ այդ ազտեղի ազանդն ի վեր երեւի՝ ի հարկէ ջանադիր պիտի ըլլան բառնալու այդ խոջն ու գայթակղութիւնը ելն, կ'երեւի թէ շատ չանցաւ և նետորականաց «սուտադատում» գիրքերն» երևցան, ինչպէս կ'վկայէ Կորիւն, և Սահակ ու Մեսրոպ ճշմարտասէր փութով աշխարհէն արտաքսել տուին «սատանայական ծուխ»ի այդ մռայլ գործիչները:

Օտար աղբիւրէ գիտենք նաև թէ Սահակ հայրապետ մասնաւոր ժողով մը գումարած ըլլայ քննելու համար Թէոգորոսի զբուածները, ինչպէս կ'պատմէ լատին եկեղեցական հին պատմիչ մը՝ Լիբերատոս սարկաւադ, և Մոպսուեստացւոյն զրքին մէկ օրինակին հետ պարտաւար մ'ալ կցելով զրկած ըլլայ առ Պրոկղ Պատրիարք, Թէպետ և Ամէտէ Թիէրի այդ պարտաւար գիրն ա՛ն ի մասսա կոչելու իրաւունքը չունի (Նեոփոք և Եփէս, էջ 175), սակայն անաեղի չէ կասկածներ ունենալ այդ թուղթի խմբագրութեան վաւերականութեան մասին, կամ գէթ շատ հաւանական կ'թուի մեզ որ օտար ազդեցութենէ մը տուն տրուած ըլլայ թէ ո՛չ ամբողջ պարտաւարներն՝ գոնէ անոր վերջաքանի այն մասը՝ ըստ որում Սահակ և հայ եպիսկոպոսներն կ'ընդունեն որ «ինչպէս նետոր Եփեսոսի տիեզերական ժողովին մէջ նշուած է, այնպէս ալ նշուեալ և անյիշելի Թէոգորոսը յակոսնէ յանուանէ նշուելի ամէն անոնց հետ, որ անոր չար մտրութիւններն ուսած՝ կ'ըստովէին Ասորիքի և Կիլիկիոյ մէջ»։ — Թէոգորոսը իր գերեզմանին մէջ նշուել, մահուանէն քանի մը տարի վերջը, տեսակ մը մոլեռանդութիւն էր՝ զոր յոյն ըլլալով քիչեր կրնային ունենալ և որ Կիւրղի անգամ սոսկում ազդած էր (Բուրդ


54). բայց վերջապէս սուտ կամ իրաւ՝ այդ համբաւաւոր պարսաւադիրը Կոստանդնուպոլսի Բ. (տեղեւերական) ժողովին մէջ (553) իր ազդեցութիւնն ունեցաւ՝ ուրիշ կարծիքներու հետ միանալով:

* * *

Աւելորդ է ըսել թէ Հայոց Եկեղեցին ընդունելով Եփեսոսի ժողովին տիեզերական և ուղղափառ հանդամանքը, Կիւրդի վարդապետութեանց կամ լաւ եւս է ըսել Աղեքսանդրեան դպրոցի հեղինակութեան հաւատարիմ՝ մնաց մինչև վերջը քրիստոսաբանական կանոնս կամ անագան տեղի ունեցած վէճերուն մէջ, և այդ դպրոցի ուսումը մեր Եկեղեցին կրցաւ պինդ պահել անոնց ձեռքով՝ որոնք Եփեսոսի ժողովէն վերջը՝ Սահակայ և Մեսրոպայ հրամանաւ՝ Աղեքսանդրիա դաւցին «ի ստոյգ յօգանալ ճեմարանին վերաբանութեան» (Խոր. Գ. ԿԱ.):

Ն. Վ. ԴՈՒՐԵՍՆԵ

ՏԱԹԵԻՈՒ ՎԱՆՔԸ



Տաթեւու մեծահռչակ ուխտը՝ Սիւնեաց նահանգին մէջ կ'դանուի: Տաթեւ անունն թէ՛ վանքին և թէ՛ միանգամայն գիւղին կ'առականի: Գիւղն՝ Գինական գետին ձախակողմը կ'իյնայ, իսկ վանքն նոյն գետին աջակողմը՝ Տանձատափ գիւղին մօտ:

Տաթեւու վանքին և եպիսկոպոսարանին հաստատութիւնն ու շինութիւնն տեղի ունեցած է Դաւիթ եպիսկոպոսի աթոռակալութեան ժամանակ՝ որ անմիջական յաջորդն է եղած Գէորգ եպիսկոպոսին: Դաւիթ ե-

պիսկոպոս՝ սոյն վանքին գեղածիծաղ վայրը 839 ին 10,000 դահեկանի գնած է բարեպաշտ անձէ մը։ Այս վերջինը՝ հինգ տարի յետոյ այլ և այլ նուիրատուութիւններով կը ճոխացնէ Տաթեւական ուխտն, որուն մարդասէր և գեղեցիկ օրինակին ուրիշ բարեպաշտներ ալ հետեւելով, ինչ ինչ կալուածներով և զանազան սուրբերով կ'հարստացնեն զայն։ Յետ այնորիկ, Սիւնեաց եպիսկոպոսները իրենց մետրապոլտական աթոռը, բաղմաթիւ սուրբերու նշխարներուն հետ հոն կ'փոխադրեն։ Բայց թէ, ո՞վ եղած է հոն նստող առաջին եպիսկոպոսն և ո՞ր ժամանակ, յայտնի չ'է, կ'ըսէ, նոյն երկրին պատմիչը՝ Ստեփաննոս Օրպէլեան, «բայց զե՛րբն և զառաջին եպիսկոպոսն որ աստ եկն ո՛չ ծանեայ, միայն ի Տէր Գէորգայ (832—839) և այսր գաի նշան և կացի ծանօթ ամենայն որպիսութեանց նոցա . . . բայց գիտեմ զի՝ բազում ժամանակօք բնակեալ էին անդ»։ (Պատմ. Օրպէլ. Հար. Ա. ԼԹ. էջ 248)։

Տաթեւական ուխտն առաւելապէս պայծառացնողներէն մին եղած է նաեւ Յովհաննէս եպիսկոպոս (882—918), որ կանուխէն եպիսկոպոսարանին մէջ մնալով, փակակալ եղած էր Ս. Խաչ եկեղեցիին։ Սա՛ հրեշապի մը հրահանգին համաձայն, մեծ կաթուղիկէ մը շինելու կը ձեռնարկէ «Յամին յորում թուականն Հայոց ՅԽԴ (895) էր, և Զատիկն ի Նաւասարդի Դ. ես Տէր Յովհաննէս որ երկրորդ կարգեցայ եպիսկոպոս Սիւնեաց զկնի Տեառն Սաղաւմոնի, արարի սկիզբն շինուածոյ եկեղեցւոյս», որ և մեռտաւան տարիներ վերջը աւարտելով, մեծ շքով անոր նաւակաւիքը կ'կատարեն։ Յովհաննէս եպիսկոպոս՝ իւր նորակերտ եկեղեցիին մէջ՝ զարմանալի և հրաշակերտ սիւն մ'ալ կ'կանգնէ «Յանուն սրբոյ Երրորդութեան», որուն ներքեւ՝ կ'պատմուի թէ ամբողջ Տաթեւու վիճակին կամ մետրապոլտութեան վարդապետներն իրենց ծայրագոյն առաքիճանները կ'ընդունէին։ Ասոր ճիշդ նմանն, բայց աւելի փոքր գիւրքով՝ Որոտան վանքին մէջ

կ'դանուէր՝ Տաթեւէն երկու ժամ հեռի. և այդ վերջինն ներքեւ ալ՝ կ'ըսուի թէ դաւաղանի մասնաւոր իշխանութիւն կ'արուէր։ Յովհաննէս եպիսկոպոս՝ որ աղքատ մարդու մը զաւակն էր, Տաթեւու ուխտին և վանքին՝ ամենէն նշանաւոր պաշտօնեայն և ծաղկեցուցիչը կրնանք նկատել. զի իւր ժամանակն՝ քարոզութիւնն և բեմբաւացութիւնն ե'ւս առաւել կ'զարգանայ և կ'ընդարձակի։ Այդ բազմաշխատ վաստակաւորին անունը, այսօր այն սինին կամ դ աւ ա զ ա ն ի ն (*) հետ կ'իշխուի և պիտի յիշուի ցվերջ։

* * *

Տաթեւու վանքն՝ առ հասարակ ընդունուած աւանդութեան մը համաձայն՝ Առաքելական աթոռ կ'համարուի՝ Եւստաթէոս առաքեալի մը անունով, բայց այդ կարծիքն ո՞րչափ հաւանականութիւն կրնայ գտնել, այդ մասին կուղենք երկու խօսք ըսել։

Աղգային ընկալեալ աւանդութեան մը համեմատ, Եւստաթէոս կամ Ստաթէոս անուն առաքեալ մը՝ աշակերտ Սուրբ Թադէոս առաքեալին, Սիւնեաց աշխարհը գալով՝ Քրիստոնէութիւն կ'քարոզէ և հոն կ'նահատակուի, և որպէս թէ, ռամիկները չ'կրնալով առաքեալին բուն անունն արտասանել, զայն կ'աղաւաղեն և Տաթեւի կը փոխեն։

Շատեր՝ այս աւանդութեան նախանձախնդիր ոգւով մը կուղեն պաշտպան կենալ ըսելու համար, թէ Արտագու աթոռէն վերջը՝ ուր քարոզած և նահատակուած էր Թադէոս առաքեալ, Սիւնեաց աթոռն առաքելական աթոռ եղած է, և այս ենթադրութիւնն հաստատուելու համար, ինչ ինչ ընդհատումներու վրայէն ոտնելով յաջորդութիւնը կ'հասցնեն մինչեւ Լուսաւորիչ։

(*) Սոյն «Գաւազանն»՝ որ երբեմն Տաթեւու զարմանազօրծ կաթողիկէին նշանաւոր զարդերէն մին էր, ցարդ եւս մնացած է եւ ցարտարութեան հրաշակերս մը լինելու ամեն երաշխիքն ցոյց կուտայ։

Ստոյգ է, թէ Թագէոս առաքեալէն վերջը՝ որ տասն
և երկուքներէն մէկն էր, մեր երկիրը եկած է Բարթո-
ղիմէոս առաքեալն և մասնաւորապէս Սիւնեաց նոսան-
դին մէջ քարոզելով, իւր տեղն Կուսնի անունն մէկը փո-
խանորդ թողած և մեկնած է անտի։ Այս աւանդու-
թեան համաձայն կ'իտսի նաեւ Սիւնեաց աշխարհի պատ-
միչն՝ Օրպէլեան։ Եւ երբեմն ալ առաքելական աթոռ
ճանչցուած է Սիւնեաց աթոռն, բայց ոչ երբեք Եւստա-
թէոս առաքեալին անունով։

Թէ Եւստաթէոս անուն առաքեալ մը Սիսական աշ-
խարհը եկած է, ոչ ինչ գիտենք այդ մասին. թէ՛ Կ. Վ.
Շահնաղարեան (Յ ա ու ա ջ ա բ ա ն ն Օ Ր պ է լ ե ա ն ի
Պ ա տ մ ու թ ե ա ն) և թէ՛ Հ. Ղ. Ալիշան (Ս ի ս ա կ ա ն,
էջ 224) տոհմային պատմութեան մէջ վերոյիշեալ ա-
ռաքեալի մասին ո՛ր և է տեղեկութիւն մը կամ ակնար-
կութիւն մը չգտնելով, կ'երկբային ընդունել այդ դա-
րաւոր աւանդութիւնը։ Մենք ալ անոնց համամիտ և հա-
մակարծիք ենք և պատմականապէս ցոյց պիտի տանք՝
թէ ո՛չ Եւստաթէոս անուն մէկն եկած է ի Սիւնիս և ո՛չ
ալ Տաթեւ անունն իւր ծագումն անոր կ'պարտի։

Նախ՝ Սիւնեաց երկրին պատմիչը Օրպէլեան, որ
այնքան խնամով և մանրապատում գննութեամբ կ'պատ-
մէ Սիսական աշխարհին մէջ գտնուող բոլոր շինութիւն-
ներն և մի բաւ միջէ կ'յիշէ Տաթեւու ուխտին հին և նոր
սրբութիւնները, ո՛չ իսկ գէթ միանգամ կ'յիշէ Եւստա-
թէոս անունը։ Եթէ այդ անունով անձ մը գոյութիւն ու-
նենար, տարակոյս չ'կայ որ անոր մասունքն ալ պիտի
յիշէր։ Այս պարագայի մէջ աւելորդ է, կարծեմ, յար-
գել այնպիսի աւանդութիւն մը, որոյ աղբիւրն ոչ ուրեք
կ'տեսնուի։

Երկրորդ, Օրպէլեան իւր պատմութեան ԽԱ. գլխուն
մէջ կ'պատմէ հրեշտակի երեւումն առ Յովհաննէս եպիս-
կոպոս Սիւնեաց, Տաթեւու մէջ եկեղեցի մը շինելու հա-
մար, գլխաւոր առաքեալներուն Պետրոսի և Պողոսի ա-
նունով։ Աստի սկսելով մինչեւ ԺԳ. դարուն վերջը Տա-

Թեւու եպիսկոպոսարանը շարունակ Ս. Խաչ. Պետրոս և Պօղոս առաքելներուն և Ս. Լուսաւորչի անուններով կ'իշխուի, և ո՛չ բնաւ Եւստաթէոսի անունով:

* * *

Դալով Տ ա թ ե ւ բառին ծագման, սա չափ կրնանք ըսել թէ Տ ա թ ե ւ անունն զուտ հայկական բառ մ'է, և անոր զործածութիւնը թերեւս քրիստոնէութենէն առաջ ալ կար: Այս ըսածնուս իբր վկայութիւն յառաջ կը բերենք հին Գահնամակը. որուն մէջ յիշուած կան և Տ ա թ ե ւ ե ա ն . ք ՝ Եւ եթէ ի նկատ առնունք Տաթեւու վանքին զմայլելի դիրքն ու գեղեցկութիւնը, առանց վարանելու պիտի ըսենք, թէ սա ի սկզբան աւագաշուք տոհմի մը բնակավայրն եղած է: Ասով կարծեմ՝ սխալ ենթադրութիւն մը ըրած չ'ենք ըլլար, եթէ Տաթեւ անունն նախաքրիստոնէական անուն մ'ընդունինք, որով ճանչցուած ըլլայ նաեւ գիւղն ու վանքը, կամ՝ թէ՛ գիւղն ու թէ՛ վանքը միեւնոյն անունը կրած ըլլան:

* * *

Թէ ի՞նչ պատճառի համար, ոմանք ուղեցին Տաթեւական ուխտն ճանչնալ Սրբոյն Եւստաթէոսի անունով, որպէս Վարդան աշխարհադիրն ԺԳ. դարում, որուն կարծիքով Տաթեւ անունն Եւստաթէոս անունէն ածանցուած ըլլայ: Պատճառը մեզ բոլորովին անծանօթ է, սակայն Շահնազարեան կ'կարծէ, թէ Ունիթոռներու Սիւնեաց աշխարհը մուտ գտնելէն յետոյ, ոմանք ուղած ըլլան անհետ ընել երկու գլխաւոր առաքելներուն անունները, և Տաթեւու առաքելոց վանքը Եւստաթէոս առաքելոյ վանքի փոխուած լինի:

Սա ալ կ'յաւելունք՝ թէ Եւստաթէոսի անձն ո՛չ թէ միայն ուրիշ եկեղեցիներու, այլ և մեր իսկ եկեղեցւոյն անծանօթ մնացած է, և միայն հարեւանցի կերպով յիշուած է նոր Յայտնաւորքին մէջ, ուրիշ սուրբերու կապդին մէջ:

ԽԱՅԴՈՒՂ. Վ.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատրիարքական Տեղապահ Գեր. Տ. Բարժուղիմէոս Սրբազան անցեալ ուրբաթ օր առժամանակեայ խառն ժողովոյ անդամներէն Տ. Մեսրոպ եպիսկոպոսի, Տ. Գէորգ Ծ. վարդապետ Երէցեանի, Վսեմ. Նուրեան էֆէնտիի և Գարակէօզեան Գրիգոր էֆէնտիի ինչպէս նաև Տ. Արիստակէս վարդապետ Վանքեանի հետ կայս. պալատ գնաց և Սէլամլըքի տրարողութենէն յետոյ՝ իրեն ընկերացող եկեղեցականաց հետ պատիւ ունեցաւ Վեհ. Սուլթանին ներկայանալու։ Տեղապահ Սրբազանը բանախօսութիւն մը արտասանելով բարեմաղթութիւններ ըրաւ Ն. Վեհափառութեան համար։ Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ պատասխանել և իր բարձր դոհունակութիւնը յայտնել։

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Վեհ. Սուլթանը բարեհաճած է առաջին կարգի Մէճիտիյէ պատուանշան շնորհել Պատրիարքական Տեղապահ Գեր. Տ. Բարժուղիմէոս Սրբազանի։

Երկրորդ. կարգի Օսմանիյէ՝ առժամանակեայ խառն ժողովոյ անդամներէն Տ. Մեսրոպ եպիսկոպոսի։

Երրորդ. կարգի Մէճիտիյէ՝ Երուսաղեմայ Պատրիարքական ֆոխանօրդ և նոյն ժողովոյ անդամ Տ. Գէորգ Ծ. վարդապետ Երէցեանի ինչպէս նաև Տ. Արիստակէս վարդապետ Վանքեանի։

Չորրորդ. կարգի Մէճիտիյէ՝ Գեր. Տեղապահ Սրբազանին անձնական քարտուղար Ագնիւ էֆէնտիի։

Առժամանակեայ խառն ժողովոյ աշխարհական անդամք անցեալ շաբաթ օր կայս. պալատ երթալով՝ ի-

րենց այդ պաշտօնին կոչուելուն համար երախտագլխու-
թիւն մատուցին յոտս կայսերական գահոյից։

Պատրիարքական Տեղապահ Գեր. Տ. Բարթողիմէոս
Սրբազան անցեալ օր կայս. պալատ գնաց և իրեն շնորհ-
եալ առաջին կարգի Մէծիտիյէ պատուանշանին համար
շնորհակալութիւն մատուց յոտս կայս. գահոյից։

Պատրիարքական Տեղապահ Գեր. Տ. Բարթողիմէոս
Սրբազան անցեալ օր այցելութիւն տուաւ Երմտական նա-
խարար Վսեմ. Նազիֆ փաշաի և Ոստիկանութեան նա-
խարար Վսեմ. Նազըմ փաշաի։

Հայ Հռոմէականաց Պատրիարքական Փոխանորդն ե-
րեքշարթի օրը Պատրիարքարան եկաւ և Գեր. Տեղապահ
Սրբազանին շնորհեալ առաջին կարգի Մէծիտիյէ պատ-
ուանշանին առթիւ, յանուն Տ. Ազարեան Պատրիար-
քին, շնորհաւորական այցելութիւն տուաւ Ն. Սրբազնու-
թեան։

Նոյնպէս Ասորւոց կաթողիկոսական փոխանորդը նոյն
օրը շնորհաւորական այցելութիւն տուաւ Գեր. Տեղա-
պահ Սրբազանին ի Պատրիարքարան։

Պատրիարքական տեղապահ Գեր. Տ. Բարթողիմէոս
Սրբազան առջի օրը կայս. պալատ գնաց։

Ն. Սրբազնութիւն իրիկունը Պէօյլւքտէրէ գնաց՝
առժամանակեայ խառն ժողովոյ տտենապետ Բարձր.
Աբրահամ փաշաի ապարանքն և գիշերը հսն անցուց։

Գաւառներէն հեղհեաէ շնորհաւորական գրեր կը
հասնին Գեր. Տեղապահ Սրբազանին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՖՐԱՆԶ ԵՈԶԷՖ ԿԱՅՍՐ այնքան գոհ է Կոլուսոփսքի կոմսին հետեւած արտաքին քաղաքականութենէն որ իւր Տէրութեան ամենարարձր պատուանշաններէն մէկն՝ Ոսկեգեղման տկանակուռ շքանշանն անոր պարգեւեց իւր ծննդեան աարեգարձին առթիւ:

— Աւստրիոյ Կայսեր տարեգարձին առթիւ Չարը Քրասնօ-Սելոյի պալատան մէջ հացկերոյթ տուաւ, և իւր օգոստափառ բարեկամին կենաց բաժակ առաջարկեց. Վիլհէլմ Կայսրն ալ Պերլինի պալատան մէջ հացկերոյթ մը տուաւ նոյն առթիւ և բաժակ առաջարկեց ըսելով. «Բաժակս կը պարպեմ ն. Վեհափառութեան Ֆրանց Եօզէֆ Կայսեր՝ իմ մտերմագոյն բարեկամիս և զինակցիս կենաց»:

Ի Զէյիներէ. — Այս Գշ. Զէյիներէի մէջ պաշտօնապէս հռչակեցաւ Չռնակորայի իշխանին ազլկան՝ էլէն իշխանուհւոյն հարսնախօսութիւնն իտալիոյ գահաժառանգ Նաբոլիի իշխանին հետ: Իշխանուհին ծնած է 1873 յունուար ամսուն, իշխանն 1869 նոյմբին: Սեւ Լեբան ժողովուրդը շատ կը խանդավառի այս խնամութեան առթիւ, որ Եւրոպեան ոչ-սլաւ մեծ Տէրութեան մը հետ սերտիւ կը կապէ զՉռնակորա: Հարսնիքին օրն յառաջիկային պիտի որոշուի: Միայն իտալիոյ արքայական գերդաստանին և Սեւ Լեբան իշխանական գերդաստանին անդամներն և անդամուհիները պիտի մասնակցին պսակի արարողութեան: Ազլիկը կաթօրիկ պիտի ըլլայ:

ԱՆԳԼ. ԴԵՍՊՈՆՔ. — Վիեննայի դեսպան Սըր Էտմընտ Մոնսըն ֆարիզի դեսպան անուանուած ըլլալով,

Լա Հէյի Բ. կարգի դեսպան Սըր Հորաս Բըմպըլտ Վի-
եննայի Ա. կարգի դեսպանութեան բարձրացաւ, Սըր
Հորաս 1891--72 ին Կ. Պոլսոյ դեսպանատան գործակա-
տար էր:

ՄԱՃՍՌ. լրագիրք յօդուածներ զրելով շնորհակալու-
թիւն յայտնեցին Ջարին՝ մաճառ պատմական յիշատակ
մը Կէսրկ Բաքսչիի սուրն Հունգարիոյ ազգային թան-
գարանին նուիրելուն համար, Մաճառ լրագիրք այս նուէրը
նշան կը համարին Ջարին խաղաղաւէտ դիտաւորու-
թեանց, որք շատ յարմար կուգան Աւստրիոյ-Հունգարիոյ
պահպանողական քաղաքականութեան:

ՂԵՐՄԱՆԻԱ. — Ռայխսդակէն կառավարութիւնն 150
միլիոն մարբի վարկ պիտի խնդրէ նաւատորմը զօրացնե-
լու համար, և այս գումարը փոխառութեամբ պիտի
հայթայթէ:

ՀԱՊԵՇԱՍՏԱՆ. — Ռուս երկրախոյզ և քաղաքական
գործիչ Լէոնդիէվ Հոմ ժամանեց: Մենեիք թագաւո-
րին կողմէ Ումպէրդօ թագաւորին ուղղեալ նամակ մը
բերել է:

— Մենեիք թագաւորը չէ ուզեր ընդունիլ իտալեան
պատգամաւոր Սինեոր Նէրացիի, առարկելով թէ իտա-
լիոյ և Հապէշաստանի միջեւ հաշտութեան դաշնագիր մը
կնքելու համար լիազօր իշխանութիւն չունի: Այս հապէ-
շական ինդիք դեռ չվերջացաւ, և բայ վէրք մ'է իտա-
լիոյ համար:

Մ. ԼԱՌՕՇ, ֆրանսական ընդհանուր գործակալն ի
Մատակաւքար, արձակուրդով փարիզ կուգայ, և հան-
րային կարծիքն ունեան դժգոհ է կղզւոյն մէջ գործոյ
վիճակէն որ կ'ըսուի թէ Մ. Լառօշ ալ պիտի չգառնայ
հոն, և աւելի կորովի ուրիշ գործակալ մը պիտի զրկուի:

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՇՐՋԱՆ ԺՁ.

ՅԱՅՏԱԳԻՐ 1896 — 97 ՎԱՐԺԱՐԱՆԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՆ



ՎԱՐԺԱՐԱՆՍ ունի երկու բաժին. 1) Ուսումնական 2) Արհեստագիտական:

Ուսումնական բաժինը, որ իւր ծրագրով կը համապատասխանէ Գերմանացւոց Միջնակարգ Վարժարաններուն, ունի եօթն դասարան, իւրաքանչիւրը մէկ տարուան ընթացքով:

Ուսմանց առարկաներն են.

1. Կրօն. — 2. Եկեղեցական պատմութիւն. — 3. Հայերէն. — 4. Տաճկերէն. — 5. Գաղիերէն. — 6. Գերմաներէն. — 7. Պատմութիւն. — 8. Աշխարհագրութիւն Բնական, Փաղաքական, Առեւտրական եւ Ուսումնական. — 9. Բնական գիտութիւնք (Բնապատմութիւն, Տարրաբանութիւն եւ Բնաբանութիւն). — 10. Ուսողութիւն (Թուաբանութիւն, Դրահաշիւ, Երկրաչափութիւն, Եռանկիւնաչափութիւն եւ Տոմարակալութիւն). — 11. Գծագրութիւն. — 12. Գեղագրութիւն. — 13. Երգ. — 14. Դաշնակ (կամաւոր). — 15. Զուժակ (կամաւոր). — 16. Մարմնամարզ:

Արհեստագիտական բաժին. Վարժարանս, որ իւր հիմնարկութենէն ի վեր հետամուտ եղած է երկրին իրական պէտքերուն գոհացում տալու եւ յատկապէս արհեստներու պարզացման նպատեղով՝ կիրթ եւ հմուտ արհեստաւորներ պատրաստելով, անցեալ տարուէն սկսեալ՝ ուրոյն կազմակերպութիւն մը տուած է իւր Արհեստագիտական բաժնին:

Այդ բաժինն ունի չորս տարուան ընթացք: Ուսանելի արհեստներն են առ այժմ Կահագործութիւն եւ Կոպղարարութիւն՝ իրենց ճիւղերով հանդերձ: Արհեստաւոր աշակերտք պարտաւոր են միանգամայն սպարապիլ հետագայ ուսմանց.

1. Կրօն. — 2. Եկեղեցական պատմութիւն. — 3. Հայերէն. — 4. Տաճկերէն. — 5. Եւրոպական լեզու մը (զոր կ'ընտրէ Ուսուցչական ժողովը). — 6. Առեւտրական Աշխարհագրութիւն. — 7. Թուաբանութիւն. — 8. Երկրաչափութիւն. — 9. Տոմարակալութիւն. — 10. Բնապատմութիւն. — 11. Բնաբանութիւն. — 12. Տարրաբանութիւն. — 13. Փայտի ու երկաթի արհեստաբանութիւն. — 14. Արհեստագիտական գծագրութիւն. — 15. Երգ:

Արհեստանոցի մէջ գործնական աշխատանոցի համար սահ-

մանուած է՝ առաջին տարին շաբաթական 18 ժամ, որ հետոյ հետէ աւելնալով՝ կը հասնի՝ վերջին տարին՝ շաբաթական 45 ի. նոյն համեմատութեամբ կը պակսին արհեստաւորի ուսումնական պարապմանց ժամերը, այնպէս որ ասոնց թիւն՝ որ առաջին տարին 20 է, հետոյհետէ նուազելով՝ վերջին տարուան մէջ կ'իջնէ 10 ի:

Թոշակաւոր գիշերօթիկ և ցերեկեայ աշակերտաց ընդունելութեան պայմաններն են.

1. Ուսումնական բաժնի ստորին դասարանին մէջ ընդունուելիք աշակերտը պէտք է

ա. Լինի 11—13 տարեկան, ուշիմ և առողջ.

բ. Ունենայ այս ծանօթութիւնները. Հայերէն վարժ կարդալ, ընթերցելի կերպով գրել, Քերականութեան Մասունքբանին գիտնալ, թեւադրութիւն մը՝ առանց ուղղագրական խոշոր սխալներու գրի առնել, Տաճկերէն էլլիֆայալ Օսմանին աւարտած ըլլալ և թուաբանութեան չորս գործողութիւնները վարժ կերպով կատարել:

Ծանօթ. — Վերին դասարաններէն ո՛ր եւ է մէկին մէջ ընդունուիլ ուզող աշակերտը պէտք է ազոր համար յատուկ քննութիւն մը կարողանայ տալ Վարժարանիս ուսուցչական Մարմնին առջեւ:

2. Արհեստագիտական բաժնին մէջ ընդունուելիք աշակերտը պէտք է

ա. Լինի 14—18 տարեկան, ուշիմ և առողջ.

բ. Ունենայ այն ծանօթութիւնները որոնք Ալդ. Վարժարաններու յատուկ կադմական կանոնադրով սահմանուած են Տարրական Նախակրթարանաց համար:

3. Վարժարանս ընդունուելիք ամէն աշակերտ պարտաւոր է ներկայացնել ծննդեան ու մկրտութեան, պատուաստի ու առողջութեան վկայականները, ինչպէս նաեւ Օսմանլիէ թէզքէրէսին:

4. Թէ Ուսումնական և թէ Արհեստագիտական բաժնի իւրաքանչիւր գիշերօթիկ աշակերտի համար պէտք է իւր տարեթուակ վճարուի 20 Օսմ. ոսկի, որ կը պարունակէ աշակերտին սնունդի, հագուստի շուացքի ու մաքրութեան, բժշկի ու դեղի, ուսման ու դասագրքերու և այլ ուսումնական պիտոյքներու ծախքերը:

Ծանօթ. — Ակներեւ է թէ տարեթուակի այս գումարը չի բաւեր ամբողջովին զոցելու աշակերտին բոլոր ծախքերը, այլ այդ պակասը կը լրացուի Հիմնադիր Բարերարին կտակած եկամուտներով:

5. Թէ՛ Ուսումնական և Թէ՛ Արհեստագիտական բաժնի իւրաքանչիւր ցերեկեայ աշակերտի համար պէտք է իբր տարեթուակ վճարուի 7 Օամ. ոսկի, որ կը պարունակէ միմիայն ուսման և ցերեկուան ճաշի ծախքերը:

6. Նորեկ գիշերօթիկ աշակերտները վարժարանական ամբողջ շրջանին համար իբր մուտք պարտին վճարել միանուագ 3 Օամ. ոսկի:

7. Ուսումնական բաժնի այն աշակերտներն որոնք կ'ուզեն կամաւոր առարկաներէն (Դաշնակ, Զուլթակ, օրական մէկ ժամ Արհեստ), ո՛ր և է մին ուսմանիլ, պարտին վճարել Զուլթակի կամ Արհեստի համար տարեկան 3. Օամ. ոսկի, իսկ Դաշնակի համար՝ տարեկան 5 Օամ. ոսկի: Կամաւոր առարկայի տուրքը կը պարունակէ միայն ուսման, գործիներու, դասագրքերու և արհեստական նիւթերու ծախքերը: Ընթացաւարտ եղող կամ ո՛ր և է պատճառաւ վարժարանէն ելնող աշակերտը կրնայ իւր գործածած Զուլթակը հետը տանիլ՝ գինը վճարելով:

8. Ամառնային արձակուրդի երկու ամիսներուն մէջ վարժարանս մնացող աշակերտք պարտին վճարել 1. Օամ. ոսկի:

Ծանօթ. — Արձակուրդի ժամանակ, օգափոխութեան կամ շրջագայութեանց միջոցաւ յատկապէս հոգ կը տարուի աշակերտաց մարմնական կազդուրման՝ առանց միանգամայն զանց ընելու անոնց ուսումնական զբաղումները, որոնց համար մտնաւոր ժամեր սահմանուած են:

9. Ամէն նորեկ աշակերտ, վարժարանս մտած պահուն, պարտի տեսչութեան ներկայացնել իւր թուակի ընկալագիրը. հակառակ պարագային մէջ, չընդունուիր: Իսկ արդէն վարժարանիս մէջ գտնուող աշակերտներէն անոնք որ մինչեւ յառաջիկայ (1896) սեպտ. 15 անվճար թողուն իրենց տարեթուակները, անպատճառ ետ պիտի ճամբուին: Թուակներն և այլ բոլոր տուրքերը պէտք է վճարուին կամ ուղարկուին վարժարանիս Գանձապետ Մեծ. Մ. Կարապետ էֆ. Տ. Ազարեանի, Կարին, Նոր-խան:

10. Իւրաքանչիւր նորեկ աշակերտի համար պէտք է վարժարանիս արկղին յանձնուի միանուագ 3 Օամ. ոսկւոյ պահեստի գումար մը, իբր աշակերտին ճամբու ծախք՝ երբ ընթացաւարտ լինի և կամ եթէ ո՛ր և է պատճառաւ հարկ դատուի վարժարանէն արձակել գինքը: Պահեստի ամբողջ գումարը կամ մնացորդը ետ կը տրուի՝ երբ աշակերտը մեկնի վարժարանէն:

11. Ոչ-կարներենակ ծնողք կամ խնամակալք պարտաւոր են անպատճառ քաղաքիս մէջ ցոյց տալ պատուաւոր անձ մը՝ իբր իրենց փոխանորդ, որուն կարելի լինի ի հարկին յանձնել աշակերտը, թողակաւոր թէ ձրիակարժ. հակառակ պարագային մէջ, աշակերտն անպատճառ ետ պիտի ձամբուի:

12. Եթէ աշակերտը տարուան ընթացքին մէջ ո՛ր է պատճառաւ արտաքսուի կամ բացակայ լինի վարժարանէս, նոյն տարուան թողակէն՝ կամ միւս տուրքերէն բան մը չի գեղջուիր:

13. Ամառնային արձակուրդի միջոցին, ծնողք կամ խնամակալք՝ եթէ կամին՝ կրնան տուն տանիլ իրենց զաւակները կամ սաները, միայն թէ՛ երթեւեկութեան ծախքն ու ամէն պատասխանատուութիւն իրենց կամ իրենց փոխանորդներուն կը պատկանին:

14. Աշակերտաց մուտքը տեղի կ'ունենայ սեպտ. 1 էն մինչեւ 15:

15. Աշակերտ տալ ցանկացող ծնողք կամ խնամակալք պարտին կանխաւ բանակցիլ վարժարանիս Տեսչութեան հետ.

Ծանօթ. — Նոր ժրիավարժներու դիմում ընելու հարկ չի կայ, վասն զի վարժարանիս Հոգաբարձութիւնն այս մասին պէտք եղած տնօրինութիւնն ըրած է արդէն:

Կարին, Յուլիս 1896

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ՍԱՆԱՍՍԱՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ

Տեսչութեան հասցէն է.

ارضرومده ساناساريان مكتي مديريته

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ՍԱՆԱՍՍԱՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ

ԿԱՐԻՆ

Direction du Collège Sanassarian

ERZEROUM

ԱՐՏՕՆԱՏԷՐ

Գ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ